

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ Արագածոտնի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստի

25.06.2015թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Ս.Սահակյանի հանձնարարությամբ նիստը վարում էր ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ տիկին Ն.Մովսիսյանը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին մարզպետարանի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի 9 անդամներ, հարգելի պատճառով բացակայում էին հանձնաժողովի անդամներ Ս.Հովսեփյանը, Ս.Պետրոսյանը, Գ.Ներսեսյանը, Վ.Հակոբյանը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին “Հաշմանդամություն ունեցող անձանց իրավաբանական կազմակերպությունների “Դաշինք” կազմակերպության համակարգող Զարուհի Բաթոյանը, “Հայաստանի կույրերի միավորման” Աշտարակի ԿՍԿ վարչության պետ Սերգեյ Այվազյանը, Աշտարակի ՁՏԿ-ի տնօրենի տեղակալ Զեմնա Սիմոնյանը:

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝

ՕՐԱԿԱՐԳ

1.Մարզում նոր կառուցվող և վերանորոգվող շենք-շինությունների նախագծման և կառուցման աշխատանքներում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան քաղաքաշինական նորմերի պահպանման մասին

Զեկ.՝ հանձնաժողովի անդամ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Դավայան

2.Մարզի հաշմանդամություն ունեցող անձանց սայլակներ, քայլակներ, հենակներ, լսողության սարքեր և այլ օժանդակ պարագաներ տրամադրելու հարցում ցուցաբերած աջակցության մասին

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ հանձնաժողովի անդամ

պ-ն Դավայանը: Նա նշեց, որ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները հաշվի առնող քաղաքաշինական նորմերի ներդրման և պահպանման համար մարզպետարանի կողմից կատարվում է հետևողական աշխատանք: Մարզի բոլոր համայնքապետերին

հանձնարարվել է նոր կառուցվող և վերանորոգվող շենք- շինությունների նախագծային առաջադրանքները տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:

Աշտարակ համայնքի քաղաքային զբոսայգու վերակառուցման նախագծում հաշվի են առնված վերը նշված քաղաքաշինական նորմերի պահանջները:

«Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի տնօրենին առաջարկել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ իրականացվող Վարդենիսի դպրոցի և Աշտարակի մարզադպրոցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերում կատարել փոփոխություն՝ թեքահարթակների կառուցման համար:

Միաժամանակ նշվեց, որ թեքահարթակներ չեն նախատեսվել նաև մարզի Քուչակ, Արագածի թիվ 1, Ծաղկահովիտի դպրոցների նախագծանախահաշվային փաստաթղթերում:

Ելույթով հանդես եկավ հանձնաժողովի անդամ Ն.Գալստյանը: Նա կարևորեց առկա հիմնահարցը, բարձրացրեց Աշտարակի թիվ 1 հատուկ գիշերօթիկ դպրոցի մուտքի թեքահարթակի կառուցման անհրաժեշտությունը: Նա հանձնաժողովին տեղեկացրեց, որ հանձնաժողովի 2014թ. դեկտեմբեր ամսվա նիստի ժամանակ Ս.Այվազյանի բարձրացրած հարցի կապակցությամբ մարզպետ պարոն Ս.Սահակյանը հանձնարարել է կատարել Աշտարակի կույրերի միավորում տանող ճանապարհի /Գր.Լուսավորիչ փողոցի սկզբնամաս/ վերանորոգման նախագծային արժեքի ճշգրտում:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ հանդես եկավ հանձնաժողովի անդամ **Ա.Մովսիսյանը**: Նա նշեց, որ ՀՀ Արագածոտնի մարզում ավելի քան 7245 մարդ ապրում է տարբեր կարգի հաշմանդամությամբ, որից 5000 մարդ հենաշարժողական խնդիրներ ունեն: Նրանք համեմատաբար ցածր մասնակցություն ունեն առողջապահական, կրթական ու տնտեսական բնագավառներում և առանձնանում են խոցելիության ավելի բարձր ցուցանիշներով: Ոչ բնածին հաշմանդամությունը դիտարկվում է որպես հիվանդության հետևանք՝ փոխկապակցված կենսագործունեության որևէ տեսակի սահմանափակմամբ և նշված հանգամանքները հնարավորություն են տալիս հնարավորինս ամբողջությամբ բացահայտել հաշմանդամություն ունեցող անձի անհատական կարիքները: Այսօր «սոցիալական մոդելի» ներդրման միջոցով ավելի հեշտ է դարձել աջակցել հաշմանդամություն ունեցող անձին: 2015թ. առաջին կիսամյակի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական խնդիրների, հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների լուծման, ապահովման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի կողմից իրականացվել են հիմնականում

պրոթեզաօրթոպեդիկ պարագաների տրամադրման աջակցության միջոցառումներ: Շնորհակալություն ենք հայտնում մեզ աջակցող բոլոր հասարակական կազմակերպություններին: Նրանց միջոցով կարողանում ենք կանոնավոր աջակցել պրոթեզաօրթոպեդիկ պարագաների ձեռքբերման, նոր և օգտագործած հագուստի տրամադրման գործնթացին: Սոցիալական ապահովության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են բազմաբնույթ սոցիալական ծրագրեր՝ այդ թվում.

Մարզի տարածքում բնակվող հաշմանդամների իրազեկման գործընթացի աջակցություն:

- Հաշմանդամների զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրեր՝ սեզոնային զբաղվածության միջոցով հողօգտագործողների ժամանակավոր 10 աշխատատեղերի ստեղծում:
- Հաշմանդամների սոցիալական սպասարկման ծրագրեր՝ արդյունքում 60 անձի տրամադրվել է օգտագործած հագուստ, ռետինե կիսաճտքավոր կոշիկներ, հողաթափեր:
- Հաշմանդամներին մատուցվող սպասարկման ծրագրեր՝ /220 անձի տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնողական, տեխնիկական և այլ օժանդակ միջոցներ/:
- Հաշմանդամների իրավունքների հանրային իրազեկում:
- Հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև փոխադարձ համագործակցության ապահովում:

Ելույթներով, հարցադրումներով հանդես եկան հանձնաժողովի անդամ Իշխան Բարսեղյանը, Վաչագան Գևորգյանը, Անժելա Հովհաննիսյանը: Հարց բարձրացվեց հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց խնամողների համար առողջարանային ուղեգրերի ավելացման անհրաժեշտության մասին:

Ելույթով հանդես եկավ “Հաշմանդամություն ունեցող անձանց իրավաբանական կազմակերպությունների “Դաշինք” կազմակերպության համակարգող Զարուհի Բաթոյանը: Նա կարևորեց հանշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների իրազեկվածության բարձրացումը, մտավոր խնդիրներով անձանց և հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավելու անհրաժեշտությունը:

Հանձնաժողովի աշխատանքներն ամփոփեց մարզպետի տեղակալ տիկին Ն.Մովսիսյանը: Նա նշեց, որ ներառական կրթության կարիք ունեցող երեխաների համար հատկապես կարևոր է թեքահարթակի առկայությունը: Մարզում կա մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար 1 հատուկ, կան ներառական կրթություն իրականացնող 2 դպրոց: 4 հանրակրթական դպրոց սկսել են ներառական դառնալու գործընթացը: Այդ դպրոցներում առաջնահերթություն է տեղաշարժման դժվարություններ ունեցողների կարիքներից ելնելով համապատասխանեցում կատարելը:

Հանձնաժողովը որոշեց.

- Հաշմանդամություն ունեցող անձանց, հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց խնամողներին պետության կողմից տրամադրվող առողջարանային ուղեգրեր, տրամադրելու կարգի մասին համայնքապետարանների, առողջապահական ոլորտի պատասխանատու աշխատողների միջոցով լայն բացատրական աշխատանք կազմակերպել:
- ՀՀ առողջապահության նախարարին ուղղված գրություն նախապատրաստել մարզի հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց խնամողներին տրամադրվող առողջարանային ուղեգրերի թիվն ավելացնելու վերաբերյալ **/պատասխանատու՝ հանձնաժողովի անդամ Վ.Հակոբյան/:**
- ՀՀ քաղաքաշինության նախարարությանն ուղղված հիմնավորված գրություն նախապատրաստել մարզի Քուչակի, Վարդենիսի, Արագածի թիվ 1, Ծաղկահովիտի դպրոցների շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու, թեքահարթակներ կառուցելու և սանհանգույցների հարմարեցում կատարելու նպատակով **/պատասխանատու՝ Ա.Դավայան/:**
- Մարզի լրագրողների համար կազմակերպել հանդիպում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուսաբանման նպատակով **/պատասխանատու՝ Ս.Զորյան/:**

ՀՀ Արագածոտնի մարզպետ, հաշմանդամություն

ունեցող անձանց հարցերով զբաղվող

հանձնաժողովի նախագահ՝

Ս.Սահակյան

Քարտուղար՝

Գ.Դանիելյան